Շուշանիկ Կուրղինյան

Նահատակները

Ամեն կես գիշեր սև շիրիմներից
Նոքա լուռ ու մունջ
Աշխարհ են գալիս . . . քնհատ երթերից
Լուսինն անտրտունջ
Ամպի արանքից կաթնածոր լույսի
Շողեր է մաղում՝
Այն հեզ դեմքերից դեռ չհանգած հույսի
Թույլ ժպիտ քաղում:
Եվ շրջում են լուռ, զգույշ երկրում
Լարված տագնապով
Գուցե թե երկրում, կամ թե եթերում,
Մի տեղից շուտով
Գեթ համր, անխոս մի չնչին նշան
Տա նրանց սրտին,
Որ կատարվել է . . . և հանգիստ գնան
Գերեզման մտնին . . .
Ոչի՜նչ . . . ո՛չ մի ձայն . . . բուն է վույվույում
Գլուխը լալիս,
Արնաներկ գետեր վշտերով կայուն
Գնում են գալիս . . .
Եվ մի սուր ցավի խեղդված հեծկլտոց
Քամու թևերին,
Շրջում է երկրում:

1907 ꝑ .

Յատուկ Պոեմ